«ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ –Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԷՄ-ԳՀԱՊՁԲ-2020/1/1

ք.Գյումրի «12» նոյեմբերի 2019թ.

<<Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա>>ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Ա.Անդրիասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Մ.Մացակյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հաստատված մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հաստատված:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հաստատված, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5 668 744.00 (հինգ միլիոն վեց հարյուր վաթսուն նութ հազար յոթ հարյուր քառասուն չորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու Էնրիկո Մատտեի անվ. պոլիկլինիկա» ՓԲԸ	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
ՀՎՀՀ 05502201	ք. Երևան, Շիրակի 1/68
Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ
2050123001121001	Հ/Հ 16300-8152619
Հասցե ք.Գյումրի, Շիրակացի 13	ՀՎՀՀ 05507136
Հեռ. 031233178	Հեռ. 060 700-500
Էլ. Փոստ enricomatte@mail.ru	էլ. հասցեն՝ tender@alfapharm.am
Տնօրեն Ա.Անդրիասյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« 12 » նոյեմբերի 2019 թ. կնքված
ԷՄ-ԳՀԱՊՁԲ-2020/1/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման *միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	33621760	Էնալապրիլ	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս	Էնալապրիլ enalapril դեղահատ 10մգ	դեղահատ	5,6	67200	12000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	12000	Ըստ պահանջի 2020թ.
2	33621760	Էնալապրիլ	Ռեպլեկ ֆարմ ՍՊԸ Սկոպյե Հյուսիսային մակեդոնիայի հանրապետություն	Էնալապրիլ enalapril դեղահատ 20մգ	դեղահատ	22	66000	3000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	3000	Ըստ պահանջի 2020թ.
3	33621520	Էնալապրիլ, հիդրոքլորոթիազիդ	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Էնալապրիլ, հիդրոքլորոթիազիդ enalapril, hydrochlorothiazide դեղահատ 10մգ+25մգ	դեղահատ	19,85	238200	12000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	12000	Ըստ պահանջի 2020թ.
5	33621510	Կապտոպրիլ	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Կապտոպրիլ captopril դեղահատ 50մգ	դեղահատ	11,54	23083,33	2000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	2000	Ըստ պահանջի 2020թ.
8	33621700	Մետոպրոլոլ	Էգիս ֆարմասյուտիկ այս ՓԲԸ Հունգարիա	Մետոպրոլոլ metoprolol դեղահատ 25մգ	դեղահատ	17,15	51450	3000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	3000	Ըստ պահանջի 2020թ.
10	33621700	Մետոպրոլոլ	Էգիս ֆարմասյուտիկ այս ՓԲԸ Հունգարիա	Մետոպրոլոլ metoprolol դեղահատ 100մգ	դեղահատ	29,8	29800	1000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	1000	Ըստ պահանջի 2020թ.
11	33621690	Կարվեդիլոլ	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 6,25մգ,	դեղահատ	20,775	20775	1000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	1000	Ըստ պահանջի 2020թ.
17	33621730	Վերապամիլ	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե Մակեդոնիա	Վերապամիլ verapamil դեղահատ 40մգ	դեղահատ	16,37	8183,33	500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	500	Ըստ պահանջի 2020թ.
18	33621730	Վերապամիլ	Ալկալոիդ ԱԴ Սկոպյե Մակեդոնիա	Վերապամիլ verapamil դեղահատ 80մգ	դեղահատ	23,37	11683,33	500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	500	Ըստ պահանջի 2020թ.

19	33621730	Վերապամիլ	Դեքսսել-ֆարմա ՍՊԸ Միացյալ Թագավորություն	Վերապամիլ verapamil (verapamil hydrochloride) դեղահատ կարգավորվող ձեռբազատմամբ 240մգ	դեղահատ	214,28	85714,29	400	Ք. Գյումրի, Շիրակացի 13	400	Ըստ պահանջի 2020թ.
20	33621380	Դիգոքսին	Դեղագործական ընկերություն Զդորովյե ՍՊԸ Ուկրաինա	Դիգոքսին digoxin դեղահատ 0,25մգ	դեղահատ	5,38	5380	1000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	1000	Ըստ պահանջի 2020թ.
22	33621110	Վարֆարին	Սակեդա ֆարմա Սպզօօ Լեհաստան	Վարֆարին warfarin դեղահատ 2,5մգ	դեղահատ	14,36	28720	2000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	2000	Ըստ պահանջի 2020թ.
27	33621710	Ատենոլոլ	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս	Ատենոլոլ, atenolol դեղահատ 50 մգ	դեղահատ	3,83	1150	300	Ք. Գյումրի, Շիրակացի 13	300	Ըստ պահանջի 2020թ.
28	33621710	Ատենոլոլ	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս	Ատենոլոլ, atenolol դեղահատ 100 մգ	դեղահատ	5,76	2883,33	500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	500	Ըստ պահանջի 2020թ.
29	33621620	Սպիրոնոլակտոն	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ Հունգարիա	Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 25 մգ	դեղահատ	37,8	302400	8000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	8000	Ըստ պահանջի 2020թ.
31	33621590	Ֆուրոսեմիդ	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Ֆուրոսեմիդ furosemide, դեղահատ 40մգ	դեղահատ	3,3	6600	2000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	2000	Ըստ պահանջի 2020թ.
32	33621590	Ֆուրոսեմիդ	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս	Ֆուրոսեմիդ furosemide,լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 2մլ	սրվակ	25,5	2550	100	Ք. Գյումրի, Շիրակացի 13	100	Ըստ պահանջի 2020թ.
33	33621580	Հիդրոքլորոթիազիդ	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս	Հիդրոքլորոթիազիդ hydrochlorothiazide, դեղահատ, 25մգ	դեղահատ	11,75	5875	500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	500	Ըստ պահանջի 2020թ.
34	33621410	Սիմվաստատին	Դենկ ֆարմա Գմբհ և Քո Գերմանիա	Սիմվաստատին Simvastatin դեղահատ 20մգ	դեղահատ	123,5	185250	1500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	1500	Ըստ պահանջի 2020թ.
35	33621410	Սիմվաստատին	Դենկ ֆարմա Գմբհ և Քո Գերմանիա	Սիմվաստատին Simvastatin դեղահատ 40մգ	դեղահատ	195,6	97833,33	500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	500	Ըստ պահանջի 2020թ.
36	33621420	Ատորվաստատին	Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ Բելառուս	Ատորվաստատին atorvastatin դեղահատ 20մգ	դեղահատ	18,5	55600	3000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	3000	Ըստ պահանջի 2020թ.
39	33661153	Դեքսամեթազոն	Էս Սի Ռոմֆարմ Քոմպանի ՍՌԼ Ռումինիա	Դեքսամեթազոն dexamethasone ակնակաթիլներ 1մգ/մլ	ֆլակոն	523	10460	20	Ք. Գյումրի, Շիրակացի 13	20	Ըստ պահանջի 2020թ.
40	33642210	Պրեդնիզոլոն	Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ Բելառուս	Պրեդնիզոլոն Prednisolone դեղահատ 5 մգ	դեղահատ	7,38	29520	4000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	4000	Ըստ պահանջի 2020թ.

41	33642220	Մեթիլպրեդնիզոլոն	Պֆայզեր Իտալիա Ս.Ռ.Լ Իտալիա	Մեթիլպրեդնիզոլոն methylprednisolone դեղահատ 4մգ	դեղահատ	49,9	199600	4000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	4000	Ըստ պահանջի 2020թ.
42	33691186	Պիրացետամ	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս	Պիրացետամ piracetam դեղապատիճ 400մգ	դեղահատ	10,8	10800	1000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	1000	Ըստ պահանջի 2020թ.
44	33631380	Տոլպերիզոն	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ Հունգարիա	Տոլպերիզոն tolperisone դեղահատ 150մգ	դեղահատ	96,53	386133,33	4000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	4000	Ըստ պահանջի 2020թ.
46	33691209	Տամսուլոզին	Ջիմ լաբորատորիես ՍՊԸ Հնդկաստան	Տամսուլոզին tamsulosin դեղապատիճ կարգավորվող ձերբազատմամբ 0,4մգ	դեղահատ	142	213000	1500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	1500	Ըստ պահանջի 2020թ.
47	33611360	Խոլեկալցիֆերոլ	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ ՀՀ	Խոլեկալցիֆերոլ cholecalciferol կաթիլներ/լուծույթ ներքին ընդունման 15000ՄՄ/մլ	դեղահատ	1467	1173600	800	Ք. Գյումրի, Շիրակացի 13	800	Ըստ պահանջի 2020թ.
48	33611360	Խոլեկալցիֆերոլ	Յունիֆարմա ԱՄՆ	Խոլեկալցիֆերոլ cholecalciferol դեղահատ 1000ՄՄ	դեղահատ	70,93	141866,67	2000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	2000	Ըստ պահանջի 2020թ.
53	33631310	Դիկլոֆենակ	Սալուտաս Ֆարմա Գմբհ Գերմանիա	Դիկլոֆենակ diclofenac դնդող արտաքին կիրառման 50մգ/գ	դենդող	1369	95830	70	Ք. Գյումրի, Շիրակացի 13	70	Ըստ պահանջի 2020թ.
54	33631300	Կետոպրոֆեն	Լեկ Ֆարմայութիք այս դդ. Սլովենիա	Կետոպրոֆեն ketoprofen, դեղապատիճ, 50մգ	դեղահատ	51,12	61344	1200	Ք. Գյումրի, Շիրակացի 13	1200	Ըստ պահանջի 2020թ.
55	33631300	Կետոպրոֆեն	Լեկ ֆարմայութիք այս դդ Սլովենիա	Կետոպրոֆեն ketoprofen դեղահատ, 100մգ	դեղահատ	75,3	60240	800	Ք. Գյումրի, Շիրակացի 13	800	Ըստ պահանջի 2020թ.
56	33631300	Կետոպրոֆեն	Լեկ ֆարմայութիք այս դդ Սլովենիա	Կետոպրոֆեն ketoprofen դեղահատ երկարատև ձերբազատմամբ, 150մգ	դեղահատ	92	322000	3500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	3500	Ըստ պահանջի 2020թ.
57	33631300	Կետոպրոֆեն	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս	Կետոպրոֆեն, ketoprofen դնդող արտաքին կիրառման 25մգ/գ	դոնդող	589	20615	35	Ք. Գյումրի, Շիրակացի 13	35	Ըստ պահանջի 2020թ.
60	33631290	Իբուպրոֆեն	Հեմոֆարմ ԱԴ Սերբիա	Իբուպրոֆեն ibuprofen դեղահատ 400մգ	դեղահատ	22,57	56416,67	2500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	2500	Ըստ պահանջի 2020թ.
61	33631290	Իբուպրոֆեն	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ ՀՀ	Իբուպրոֆեն ibuprofen դեղակախույթ ներքին ընդունման 20մգ/մլ առանց շաքարի,առանց ներկանյութերի	ֆլակոն	1384	968800	700	Ք. Գյումրի, Շիրակացի 13	700	Ըստ պահանջի 2020թ.
62	33661122	Պարացետամոլ	Նիժֆարմ ԲԸ Ռուսաստան	Պարացետամոլ, Paracetamol, մոմիկներ ուղիղաղիքային 50մգ	մոմիկ	39	11700	300	Ք. Գյումրի, Շիրակացի 13	300	Ըստ պահանջի 2020թ.

64	33661122	Պարացետամոլ	Նիժֆարմ ԲԸ Ռուսաստան	Պարացետամոլ, Paracetamol, մոմիկներ ուղիղաղիքային 250մգ	մոմիկ	45,8	9160	200	Ք. Գյումրի, Շիրակացի 13	200	Ըստ պահանջի 2020թ.
65	33661122	Պարացետամոլ	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Պարացետամոլ , Paracetamol դեղակախույթ ներքին ընդունման 125մգ/5մլ	ֆլակոն	304	21280	70	Ք. Գյումրի, Շիրակացի 13	70	Ըստ պահանջի 2020թ.
66	33661122	Պարացետամոլ	Իրբիտսկի ·Քիմիադեղագործական գործարան ԲԲԸ Ռուսաստան	Պարացետամոլ, Paracetamol, դեղահատ 500 մգ	դեղահատ	4,4	880	200	Ք. Գյումրի, Շիրակացի 13	200	Ըստ պահանջի 2020թ.
67	33661127	Մետամիզոլ	Երևանի քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ ՀՀ	Մետամիզոլ metamizole լուծույթ ներարկման 500մգ/մլ, 2մլ ամպուլ	սրվակ	31,9	3190	100	Ք. Գյումրի, Շիրակացի 13	100	Ըստ պահանջի 2020թ.
68	33691226	Տրամադոլ	ԿՌԿԱ դդ Սվովենիա	Տրամադոլ tramadol դեղապատիճ,50մգ	դեղապատիճ	43,5	43500	1000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	1000	Ըստ պահանջի 2020թ.
69	33691226	Տրամադոլ	ԿՌԿԱ դդ Սվովենիա	Տրամադոլ tramadol լուծույթ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլ	սրվակ	165,6	115920	700	Ք. Գյումրի, Շիրակացի 13	700	Ըստ պահանջի 2020թ.
70	33671130	Դիֆենհիդրամին	Երևանի քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ ՀՀ	Դիֆենհիդրամին diphenhydramine լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ	սրվակ	22,3	2230	100	Ք. Գյումրի, Շիրակացի 13	100	Ըստ պահանջի 2020թ.
71	33671131	Լորատադին	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Լորատադին, Loratadine դեղահատ 10մգ,	դեղահատ	23,2	4640	200	Ք. Գյումրի, Շիրակացի 13	200	Ըստ պահանջի 2020թ.
72	33671131	Լորատադին	Բայեր Քոնսումեր Քեյր ԱԳ Բելգիա	Լորատադին, Loratadine օշարակ 1մգ/մլ	ֆլակոն	1999	29985	15	Ք. Գյումրի, Շիրակացի 13	15	Ըստ պահանջի 2020թ.
73	33691140	Ացետիլցիստեին	Սալուտաս ֆարմա Գմբհ Գերմանիա	Ացետիլցիստեին acetylcysteine դեղահատ 100մգ	դեղափոշի	85,5	59850	700	Ք. Գյումրի, Շիրակացի 13	700	Ըստ պահանջի 2020թ.
74	33691140	Ացետիլցիստեին	Սալուտաս ֆարմա Գմբհ Գերմանիա	Ացետիլցիստեին acetylcysteine դեղահատ 200մգ	դեղափոշի	100,35	70245	700	Ք. Գյումրի, Շիրակացի 13	700	Ըստ պահանջի 2020թ.
75	33691140	Ացետիլցիստեին	Սալուտաս ֆարմա Գմբհ Գերմանիա	Ացետիլցիստեին acetylcysteine դեղահատ 600մգ	դեղահատ	204,3	102150	500	Ք. Գյումրի, Շիրակացի 13	500	Ըստ պահանջի 2020թ.
76	33661136	Դիազեպամ	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Դիազեպամ, diazepam դեղահատ 5մգ	դեղահատ	8,125	2437.5	300	Ք. Գյումրի, Շիրակացի 13	300	Ըստ պահանջի 2020թ.
77	33661136	Դիազեպամ	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Դիազեպամ diazepam դեղահատ 10մգ	դեղահատ	10,125	2025	200	Ք. Գյումրի, Շիրակացի 13	200	Ըստ պահանջի 2020թ.
78	33661136	Դիազեպամ	ԿՌԿԱ դդ Սվովենիա	Դիազեպամ diazepam լուծույթ ներարկման 5մգ/մլ, 2մլ	սրվակ	89,2	8920	100	Ք. Գյումրի, Շիրակացի 13	100	Ըստ պահանջի 2020թ.
79	33661131	Ֆենոբարբիտալ	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	Ֆենոբարբիտալ phenobarbital դեղահատ, 100մգ	դեղահատ	14,45833	43375	3000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	3000	Ըստ պահանջի 2020թ.

80	33661128	Կարբամազեպին	Արփիմեդ ՍՊԸ ՀՀ	,արբամազեպին, carbamazepine դեղահատ 200մգ,	դեղահատ	11,9	83300	7000	Ք. Գյումրի, Շիրակացի 13	7000	Ըստ պահանջի 2020թ.
84	33651111	Ամօքսիցիլին	Թրոջ Մեդիքալ Գմբհ Հնդկաստան	Ամօքսիցիլին amoxicillin դեղապատիճ 250մգ	դեղահատ	29,6	7400	250	Ք. Գյումրի, Շիրակացի 13	250	Ըստ պահանջի 2020թ.
ԸՆԴԱՄԵՆԸ								5668744			

Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

Ապրանքների ձեռք չբերված խմբաքանակի մասով պայմանագիրը ենթակա է լուծարման

*Բոլոր հղումների դեպքում հասկանալ <<կամ համարժեք>>արտահայտությունը, համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը:

ընդ որում

* **Ապրանքը պետք է լինի չօգտագործված:** Գործարանային փաթեթավորումը պարտադիր է :**Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը**:

Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

1-85 չափաբաժինների դեղորայքը վաճառողը 30%, 50% և 100% զեղչով դեղորայքը բաց է թողնելու գնորդի կողմից դուրս գրված դեղատոմսերով, պոլիկլինիկայի սպասարկման տարածքում գտնվող դեղատնից կամ դեղատնային կրպակից:

ԳՆՈՐԴ

«Գյումրու Էնրիկո Մատտեի անվ. պոլիկլինիկա» ՓԲԸ

ՀՎՀՀ 05502201

Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ

2050123001121001

Հասցե ք.Գյումրի, Շիրակացի 13

Հեռ. 031233178

Էլ. Փոստ enricomatte@mail.ru

Տնօրեն Ա.Անդրիասյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ

ք. Երևան, Շիրակի 1/68

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ

Հ/Հ 16300-8152619

ՀՎՀՀ 05507136

Հեռ. 060 700-500

էլ. հասցե՝ tender@alfapharm.am

/ստորագրություն/

Կ.Տ